

Ձի տյա աշխարհ սրտմըտութեան Անմահին
Ահեղ անուրջ թըւի նոցա, և մատնեալ
Ըստուերներու, յոր գայթ ի գայթ կը շրջին
Եւ փըշերով կ'արիւնոտի նոցա քայլ,
Մինչև յօգնած իյնան ի հող. — Դու հրեշտակ,

Յօղէ սիրոյ մէկ կայլակ :

Ողորմէ. մի գուցէ անէծք աղքատին
Ուրուականաց պէս ի քո սրահա խնջոյից
Արձանանան շուրջ. մի գուցէ երկնային
Փայլատակէ ցասումն ի թերս շանթից .

Ձի մուրացիկն 'ի ծուէնս, և դու ճոխաղգեաց

Մէկ հայր ունիք մէկ Աստուած :

Ողորմէ կին, որ երբ հասնի ժամն ահեղ
Ուր ամեն բան թողուս աստէն, զի երկրիս
Վաղանց են ինչք, զի տընանկաց ձայն անմեղ
Ձքեղ որորեն ի քարեղէն քո խըշտիս .

Եւ Աստուծոյ առջև ելնես սրբորւած

Արցունքներով թըշուառաց :

ԹՈՎԱԾԱՍ ԹԵՐԶԵԱՆ

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՅՆ Ի ՍԻՊԵՐԻԱ

ՎԵՊՔ

(Տես երես 226 :)

Դադարեցին յայնժամ մրրիկք սպառ-
նալիցք, պարզեցան երկինք, ոչ ևս սու-
րային ընդ այն ամաք ահարկութ, անկան
հողմք և լռեցին, և սիրտ Սփրինճերի
զուարթացաւ. իսկ պատանին հառաչէր,
զի եթող օրիորդն զբաղուկ նորա և գնայր
ինքնին, առ 'ի ցուցանել հօր իւրում զոյժ
իւր՝ յոր վստահէրն, և զկար գնալոյ 'ի խըն-
դիր շնորհի աղատութեան նորա մինչև 'ի
ծագս երկրի եթէ հարկ լինէր: Եւ 'ի հա-
սանել նոցա ողջամբ 'ի տուն, Փեղորա ե-
րեցունցն ևս գիրկս արկեալ՝ օրհնէր զԱս-
տուած, և զգաստրիկն սփոփէր չհոգալ զար-
տասուացն՝ զոր եհեղ վասն նորա: Յամա-
քեցոյց զկօշիկս նորա սկիւղենիս, 'ի բաց
էառ 'ի նմանէ զմաշկեակն, և սանդրեաց
զվարսս նորա երկայնահերս:

Այսոքիկ մայրագութ խնամք, յորս հա-
նապաղօր վայելէր Ելիսաբեթ, և որովք
օրըստօրէ սիրտ նորա յաւելոյր 'ի սէր, գո-
րովէին զսիրտ պատանւոյն. և չկարէր սի-
րել զդուստրն՝ առանց սիրելոյ և զմայր
նորա, և 'ի պսակել իւր ընդ օրիորդին՝

բարեբախտութեան իւրոյ լրումն համարէր
ունել 'ի մայր իւր զՓեղորա:

Ի փարատել 'ի սպառ մրրիկն և 'ի պայ-
ծառանալ երկնից՝ և տիւն տարածամէր:
Յայնժամ առեալ Սփրինճերի զճեռանէ
պատանւոյն, տրտմութեամբ և փղըճկմամբ
'ի հրաժեշտի կացուցանէր զնա: Գիտաց Ե-
լիսաբեթ՝ զի այն վերջին գալուստ էր պա-
տանւոյն, և խռովեալ և կարմրերփնեալ՝
ասէ. Ո՛չ ևս ուրեմն գայցես այսր: Որում
պատանին ազդու իմն ետ պատասխանի.
Յորչափ աղատ եմ, և դուք աստ իցէք, ոչ
մեկնեցայց 'ի Սայիմբայ, եկից յանապատ
այսր, եկից 'ի դաշտ և յեզերս գետոյդ, ե-
կից ամենայն ուրեք՝ ուր մարթ իցէ ինձ
զքեզ տեսանել: Եւ յասելն զայս՝ կառեալ,
զարմացեալ ընդ կիրս իւր և ընդ բանս.
բայց օրիորդն թէպէտև զօրութեան բանից
նորա ոչ 'ի վերայ եկաց, սակայն ոչ ինչ
երկբայէր առնուլ պարապ յայտնելոյ նմա
զխորհուրդ իւր, և այնու վստահութեամբ
ամոքէր տրտմութիւն իւր ընդ մեկնել նո-
րա:

Ի հասանել կիւրակէի աւուր՝ Ելիսաբեթ
և մայր նորա վաղ քաջ ընդ առաւօտն
պատրաստեցան գնալ 'ի Սայիմբա: Սփրին-
ճեր տրտմախառն ասէր նոցա ողջամբ գնալ,
զի յորմէ հետէ կային յաքսոր՝ չէր երբէք
լեալ նմա մնալ միայնակ 'ի հիւղի անդ. այլ

գիտաց ծածկել 'ի նոցանէ զյոյզս սրտին, և օրհնեաց զնոսա խաղաղութեամբ, և յանձն արար 'ի խնամս Աստուծոյ՝ առ որ գնայինն աղօթել: Զուարթ էր տիւն, և համառօտ թուէր նոցա ուղին. աղջիկն գեղջուկ սկիւթացի առաջնորդէր նոցա ընդ անտառն մինչև 'ի Սայիմքա: Եւ 'ի մտանել նոցա յեկեղեցին՝ աչք ամենեցուն 'ի նոսա հայէին, այլ նորա 'ի Տէր միայն. սիրտ երկաքանչիւրոցն նովին աստուածսիրութեամբ վառեալ, խոնարհեալ երկաքանչիւր զգլուխս իւրեանց, անցին մերձ 'ի սուրբ սեղանն. և ծունր եղեալ, անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց, զնոյն աղօթս վասն նոյն նորին իրաց մատուցանէին. երկարագոյնս օրիորդն քան զմայր իւր աղօթէր, և երկաքանչիւր եղեն լսելի:

Ի ժամ սրբոյ պատարագին՝ քօղ զերեսօք այնպէս կայր օրիորդն, յԱստուած միայն և 'ի հայր իւր զմիտս սեւեռեալ. իսկ յորմէ յուսայրն օգնութիւն՝ և ոչ 'ի միտս իւր անկանէր: Օրհներգութիւնը Աստուծոյ քաղցրաձայնեալք 'ի բեմին՝ խոր 'ի սիրտ իւր տալաորէին, զի չէր նորա հանգոյն ինչ լուեալ. թուէր նմա տեսանել գերկինս բացեալ, և հրեշտակի Աստուծոյ իջանել յերկնից յառաջնորդութիւն իւր. և տեւաց տեսիլս այս մինչև 'ի վախճան երգոցն: Եւ ապա 'ի վեր առեալ օրիորդին զգլուխ իւր, ետես անդէն զպատանին Սմոլոֆ, զի կայր մօտ՝ յեց 'ի մի 'ի կամարակալ սեանց, ակնկառոյց յինքն գորովով. և թուէր նմա պատանին նոյն ընդ հրեշտակին, որ գայրն երկնից առաջնորդել 'ի խնդիր ազատութեան հօր իւրոյ. և յակնարկելն 'ի նա զուարթագին՝ խանդաղատեցաւ պատանին ընդ այնպիսի հայեցուած նորա, որ ըստ սրտի իւրում էր:

Եւ յելանել նոցա յեկեղեցւոյ անտի՝ հրաւիրեաց զՓեղորա 'ի բալխիր իւր, ածել զնոսա մինչև 'ի մուտս անտառին: Մտադիւր ընկալաւ Փեղորա զհրուէրն, զի վաղագոյն այնուիկ հասանէր առ Սփրինձեր. բայց Ելիսաբեթ տրտմեցաւ ընդ այն, զի յուսայր 'ի գնալն հետի՝ գտանել պարապ խօսելոյ առանձինն ընդ պատանւոյն՝ զոր չկարէր 'ի բալխրի անդ: Զի զիարդմարթէր 'ի վեր հանել նմա զխորհուրդ իւր առաջի մօր իւրոյ, որ մերժէր արգեօք զայն սոսկալով, և արգելոյր պատանւոյն բացէ 'ի բաց չօգնել նմա. բայց և 'ի լռելն՝ կորուսանէր զայն պատեհ, թերևս անդարձ, յայտնելոյ պատանւոյն զխորհուրդ իւր: Յայսպիսի յոյզս սրտի և 'ի վարանս՝ հասին 'ի մուտս անտառին, ուր պատանին ինքնին յայտ արար զի չէր նմա օրէն անդր ևս ընդ

նոսա ուղեկցել. այլ և ոչ կարացեալ մեկնել իսկոյն յօրիորդէն, մղեաց յառաջ զբալխիրն մինչև յեղերս լճին, ուր հարկ էր զկայ առնուլ: Էջ նախ Փեղորա, և աջ տուեալ պատանւոյն՝ ասէ. Ո՛չ գայցես երբէք երբէք այսր 'ի ճեմ: Իսկ օրիորդն, որ զհետ մօրն իջանէր, յաւել 'ի մրմունջ. Մի՛ այսր, այլ 'ի դաշտ անդր վաղիւ յաղօթարանն փոքրիկ: Որով զհօրէ իւրմէ իմանայր խօսել, այլ ժամադիր լինէր պատանւոյն յանգէտս, և յընդունել նորա զուարթութեամբ զժամադրութիւնն, փայլէր և յաչս իւր քաղցր զուարթութիւն:

Վիմեաց նա ընդ մօրն 'ի հիւղ անդր, և պատանին դարձաւ միայնակ ընդ անտառն՝ ընկղմեալ 'ի ցնորս բերկրալիս. զի զիարդմարթէր նմա երկմտել ընդ սէր օրիորդին՝ յետ այնպիսի բանից նորա, և զիարդ հնար էր նմա չբերկրիլ ընդ բախտ իւր, ճանաչելով որպիսի ոք էր օրիորդն: Իսկ Ելիսաբեթ ոչ ևս վարանեալ մտայոյզ, այլ ամենայն վստահութեամբ անմեղութեան գընայր 'ի վաղիւ անդր 'ի մատուռն անդր փայտակերտ, արագ և թեթև զառաջին ոտնփոխն առնելով յազատութիւն հօր իւրոյ: Սփռէին 'ի դաշտ անդր ձիւնախաղաղ՝ ճառագայթք արեգական, և սառամանիք կախեալք զծառոց՝ ցոլացուցանէին խիտ ընդ խիտ զպատկեր նորին բազմադիմի 'ի յոգնազան հայելիս. այլ ճաճանչն այն պայծառ և աստուածագործ չէր այնպէս վճիտ և հրաշալի՝ որպիսի էր սիրտ օրիորդին: Եմուտ նա 'ի ներքս 'ի մատուռն, ուր չև ևս հասեալ էր պատանին. յամեցումն նորա խռովեցոյց զօրիորդն, և նուաղեցան աչք նորա ոչ յունայնութենէ և 'ի սիրոյ, զի տկարութեան և կրից չգոյր 'ի նմա տեղի, այլ խիթայր 'ի յեղակարծ ինչ պատահարաց զնա խափանեալ: Եւ 'ի յոյզս սրտին մինչդեռ աղօթէր առ Աստուած զերծանել 'ի վարանացն, եհաս պատանին, և զարմանայր ընդ կանխել նորա անդր. զի որչափ և փութացուցանէ սէր 'ի զնացս, սակայն Ելիսաբեթ եցոյց զի առաւել ևս քան զսէր ճեպէ առաքինութիւն:

Ընդ տեսանել նորա զպատանին՝ ամբարձ զաչս իւր և զձեռս 'ի վեր, և դարձեալ 'ի նա վայելուչ իմն և գորովական աշխուժիւ ասէ. Քանի՛ ըղձիւք մնայի քեզ, սիրելիդ իմ: Հայեցուած նորա և բան, ժամադրութիւն և կանխումն 'ի ժամադրեալն վայր, ոչ թողուին տեղի երկբայելոյ պատանւոյն ընդ սէր օրիորդին. և 'ի կամեն յայտ առնել նմա զսէր իւր փոխադարձ, կանխեալ օրիորդին՝ ասէ. Լուր ինձ սիրելի, օգնականութեան քում կարօտիմ առ

ի փրկել զհայր իմ. խոստացիր օգնել ինձ: Դիտթեցան խորհուրդք պատանւոյն. գուշակէր զմերժումն իւր, սակայն չդադարէր ի սիրոյ նորա: Եղ ծունր — համարէր օրիորդն անկանել նմա առաջի Աստուծոյ — այլ նա օրիորդին խոստանայր օգնել: Յայնժամ յաւել օրիորդն. Յորմէհետէ ճանաչեմ զանձն, ի ծնողս իմ են խորհուրդք իմ, և ի սէր նոցա իղձք իմ. բարեկենդանութիւն նոցա է ինձ ի կեանս: Յօգնութիւն նոցա կոչէ զիս Տէր, և գրեզ օգնական ինձ ի կատարումն կոչման իմոյ: Կամիմ գնալ ի Պետրոպօլիս ի խնդիր շնորհի աղատութեան հօր իմոյ: Զարմացաւ եկաց պատանին. և ի կամելն զգէմ ունել, ած թափեաց օրիորդն. Չկարեմ ասել յորմէհետէ յածի խորհուրդս այս ի մտի իմում. թուի ինձ ընկալեալ զայն ընդ կեանս, արբեալ ընդ կաթին. չյիշեմ այլ ինչ կանխադոյն քան զայս լեալ ի միտս իմ. անպուրծ ի յուշոյ է խորհուրդս այս ինձ, սովին ննջեմ, սովին զարթնում, սովաւ առնում և տամ շունչ. սա միշտ և ի սեսանել իմում գրեզ՝ զմիտս իմ գրաւէ, և յայս իսկ եկի այսր: Սա արիացուցանէ զիս յաչս զնել զվաստակ և զտառապանս, զմերժումն և զմահ. սա անհնազանդ իսկ ծնողաց իմոց կացուցէ զիս, եթէ երբէք հակառակ կացցեն երթին իմում: Տեսանես, սիրելի, զի ի դուր է զգէմ ունել. անդըրդուելի է հաստատութիւն մտաց այսպիսի:

Ի լուր այսոցիկ հատուածնայն յոյս սիրատարի սրտի պատանւոյն. յապուչ հարաւ ընդ ազնուախոհ միտս և ընդ արիութիւն օրիորդին, և քաղցր քան զսիրոյ հեղեալ արտասուս, ասէ. Ո՛հ, երանի ինձ, և բիւր երանի, զի ընտրես դու զիս խորհրդակից և օգնական քեզ ի խորհուրդ այգպիսի. այլ թերեւ չգիտիցես զարգելս... Ի վերայ էած օրիորդն. Երկու արգելք են՝ որ կացուցանեն զիս ի տագնապի. դու միայն կարող ես բաւնալ զայնոսիկ ի բաց: Իսկ պատանին, որ ցանկայր ծառայել նմա, ասէ. Խօսեաց և ասա. որ ինչ և խնդրիցես՝ սակաւ է քան զիղձս իմ հաճելոյ ըզքեզ: Օրիորդն ասէ. Ահա արգելքն. մի՛ զի անձանթ է ինձ ուղին, ընդ որ պարտ է գնալ. և միւս ևս՝ զի կասկածեմ թէ դուցէ փախուստ իմ ածցէ հօր իմում վնաս: Աւստ ինձ ապա զգէմ ուղւոյս, և գրաղաքս՝ ընդ որս պարտ է ինձ անցանել, զի ջլանս ասպնջականս հիբիս, և զհնարս հասուցանելոյ անվրէպ առ ինքնակալն զաղերս իմ. այլ առաւել քան զամենայն լեր ինձ երաշխաւոր, զի հայր քո ոչ պատուհասեսցէ զիմս վասն փախստեան իմոյ: Պատանին ասէ. Այլ զի-

տիցես, քանի զայրացեալ է ինքնակալն ընդ հօր քում, զիտիցես զի ոխերիմ թշնամի իւր զնա համարի: Օրիորդն ասէ. Եւ զոր եղեուն գործեալ է նորա. չգիտեմ, ոչ զանուննորա և ոչ զհայրենիս, այլ գիտեմ և եթ հաւատեալ, զի անպարտ է նա: Պատանին ասէ. Եւ որպէս, չյիտիցես զաստիճան և զմեծարանաց անուն հօր քո: Օրիորդն ասէ. Բնաւ իսկ ոչ: Յայնժամ գոչեաց պատանին. Յապուչ կրթիմ, անարատ ի հպարտութենէ և ի սնափառութենէ է սէր քոյին. քո չիք ծանուցեալ ի ծնողս քո այլ ինչ քան զհայր քան զմայր. այլ զինչ է մեծատոհմութիւն առաջի մեծութեան հոգւոյ քո, և զինչ անուանք մեծարանաց առաջի մեծախոհութեան քո... Կարճեաց զբանս նորա առաքինաբար օրիորդն, և ասէ. Կաց մնա, այդոքիկ՝ գաղտնիք հօր իմոյ են, ի նրմանէ պարտ է ինձ ուսանել զայգոսիկ: Հիացաւ պատանին, և ասէր ցանձն իւր. Բարեւոք խորհի օրիորդն չհամարել բարի՝ քան զոր լաւագոյն ինչ կարէ գործել: Եւ յառաջ մատուցեալ օրիորդին զբանսն, յաւել. Իսկ երբ ուսուցես ինձ զկարեորս ուղեորութեան իմոյ: Պատանին ասէ. Աւասիկ կամ. այլ կարիցես գնալ հետի մենաւոր անօդնական ընդ երեք հազար հինգ հարիւր մը զոնս, որ ի միջի կան ընդ Իսթիմ և ընդ Ինկիրի: Յայնժամ օրիորդն անկեալ առաջի սեղանոյն, ասէ. Որ առաքէն զիս յօգնութիւն ծնողաց իմոց, ոչ թողցէ զիս անօդնական: Առ որ լռեալ վայրիկ մի պատանին, և ապա ասէ արտասուօք. Անհնար թուի նախ քան զգարնայնոյ զուարթագին աւուրս գնալ քեզ. զի անգնալի է արդ ուղին, բալխիք իսկ դադարեն արդ. ողողեցեն զքեզ խոնաւուտք անտառաց Ալպերիոյ: Ողջամբ մնա, Ելիսաբեթ, եկից յետ աւուրց ասել որ ինչ կարացից խորհել զառաջարկութենէդ. ապշեալ եմ ընդ այդ, չկարեմ գմտաւ ինչ արդ ածել զայդմանէ: Դառնամ ի Թոպուք խօսել ընդ հօր իմում. այր լու է նա. սուաւել յոյժ լինէր աստ տառապելոց բազմութիւն, եթէ չէր նա աստ իշխան. առաքինութիւնք վսեմականք սիրելի են նմա. այլ չէ նա ազատ օգնելոյ քեզ. պարտք իւր խափանեն զնա. այլ երդնում քեզ, զի ոչ պատուհասեսցէ նա զհայր, որոյ ածեալ է դուստր այսպիսի առաքինի ի լոյս:

Ո՛հ, պարծանս իսկ համարեսցի նա անձին կոչել զքեզ իւր դուստր. ներեա ինձ Ելիսաբեթ, ակամայ անձին իմոյ սիրտ իմ բարբառի. գիտեմ զի չիք տեղի ի քումդ սրտի այլոց ինչ կրից, բաց ի միայնոյ՝ որ զայն գրաւէ: Անակնկալ է ինձ. այլ եթէ

Հասցէ օր, յորում ծնողք քո դարձ 'ի Հայ-
րենիս իւրեանց արարեալ լիցին բարե-
բաստք, և դու Հանգիցես, յիշես իր յայն-
ժամ զի Սմոլոֆ կտես յանապատի աստ
զքեզ և սիրեաց, և ընտրելի իսկ էր նմա
կալ աստ ընդ քեզ կենակից աղքատ և
անյայտ՝ քան ժառանգել զփառս աշխար-
հի... Եւ ոչ կարաց կատարել զբանս իւր,
հեղձամղձուկ լեալ յարտասուաց. և ինքն
ընդ ինքն զարմանայր առ նորանշան գորո-
վոյ սրտին, զի չէ էր նորա կրեալ 'ի սրտի
նուաղումն այնպիսի, քանզի չէ էր ումեք
տարփացեալ:

Կարկեալ եկաց Ելիսաբեթ, և չկարէր
Հասու լինել բանից պատանւոյն, զի բաց 'ի
ծնողասէր գորովոյ՝ այլ ինչ սէր անձանօթ
էր նմա: Թերեւս ոչ այնչափ օտար 'ի լսե-
լիս իւր թուէին բանք պատանւոյն, եթէ
գոյր տեղի այնպիսեաց բանից 'ի սրտի իւ-
րում. և եթէ էին ծնողք իւր 'ի բարեբախ-
տութեան՝ սիրելի թերեւս լեալ էր նմա
Սմոլոֆ, կամ լինէր՝ եթէ դառնային 'ի բա-
րեբախտութիւն. այլ ցորչափ 'ի թշուառու-
թեան կային, չէր մարթ նմա վերջանալ յոր-
դիական սիրոյ. իսկ երկուց սիրելութեանց՝
սիրտ մարդկեղէն թէպէտ լայնատար, ոչ
է բաւական: Ելիսաբեթի չէր կենցաղավա-
րեալ յաշխարհի. անձանօթ էին նմա սո-
վորոյթք և պատշաճք կենակցութեան. սա-
կայն պատկառանք իմն ընդաբոյս՝ յորդոր
առաքինութեան ազդէին նմա, զի չէր
պարտ օրիորդի յամել միայնակ ընդ պա-
տանւոյ 'ի լսել այնպիսի բանս 'ի բերանոյ
նորա: Դիմեաց նա յելս կոյս մատրանն.
և 'ի զգալ պատանւոյն զմիտս նորա, ասէ.
Վիշտ թերեւս ետուն քեզ բանք իմ, Ելիսա-
բեթ. այլ, ո՛հ, երդուեալ յայն՝ որ կայ 'ի
վերայ սրբոյ սեղանոյս, զի ոչ ինչ նուազ 'ի
սիրոյ՝ պատկառանս կրեմ 'ի սրտի. զիտէ
Տէր, զի թէ հրամայես՝ աւասիկ կամ 'ի
լուել և տալ քեզ զկեանս իմ. և որպէս
ապա կարիցեմ լինել վշտաց քեզ առիթ:
Յայնժամ օրիորդն ասէ քաղցրութեամբ.
Ոչ առ վշտի գնամ 'ի բաց. այլ զի զծնո-
ղաց իմոց եկի խօսել, և ծանեար զամե-
նայն, չունիմ արդ այլ ինչ քեզ ասել, և
դառնամ անդրէն: Պատանին ասէ. Եւ
կարի իսկ քաջ, օրիորդ ազնիւ, դարձ անդ-
րէն 'ի քո առաքինութիւն. գործակից ընդ
քեզ ընկալ զիս 'ի նոյն, արժանի զանձն իմ
քեզ կացուցանել: Այլ ինձ քաւ լիցի մո-
ռանալ զքեզ. չիք և չիք այլ իղձ 'ի սրտի ի-
մում, բայց 'ի կատարումն առաքինութեան
քո օգնական լինել: Եւ խոստացաւ նմա
տալ 'ի միւսումն կիւրակէի յեկեղեցւոյ
անդ 'ի Սայիմքա՝ զամենայն կարևոր տեղե-

կութիւնս 'ի կատարումն առաջարկեալ
խորհրդոյն. և մեկնեցան 'ի միմեանց:

Ի հասանել միաշաբաթի աւուրն գնայր
Ելիսաբեթ զուարթազին ընդ մօր իւրում
'ի Սայիմքա, և մնայր անժոյժ գալստեան
պատանւոյն անդր, առնուլ 'ի նմանէ զխոս-
տացեալ տեղեկութիւնսն 'ի զիւրութիւն
ուղևորութեանն: Բայց վախճան եղև սըր-
բոյ պատարագին, և չերեէր նա 'ի միջի 'ի
տագնապ օրիորդին. և մինչդեռ մայր նորա
կայր յաղօթս, եհարց նա պառաւոյ ու-
մեմն՝ թէ էր յեկեղեցի անդր եկեալ պա-
տանին Սմոլոֆ. և իբրև լուաւ զի չէր, և
զի յերկուց աւուրց հետէ մեկնեալ գնա-
ցեալ էր նա 'ի Թոպուք, տրտմեցաւ յոյժ.
Թուէր նմա սիրելագունի ըղձիցն իւրոց
խուսել յինքենէ 'ի պահուլ՝ յորում կար-
ծէրն պատահել այնմ: Խէթք և կասկա-
ծանք տագնապէին գնա. խորհէր 'ի մտի,
զի եթէ պատանւոյն մոռացեալ զխոստումն
իւր՝ մեկնեալ էր 'ի Սայիմքայ, զիմրդ մար-
թէր նմա յիշել զայն 'ի Թոպուք. և ո՛ ապա
լինէր իւր օգնական: Ի խորհուրդս յայսոսիկ
յուզէին զօրն զայն ցերեկ միտք իւր. և յե-
րեկոյին ընկճեալ 'ի տրտմութենէն, որ
այնչափ առաւել ծանր էր նմա՝ որչափ զի
միայնակ կրէր զայն ծածկելով 'ի ծնողաց
իւրոց, խոյս ետ վաղագոյն 'ի խղիկ իւր առ
'ի լինել գէթ ազատ 'ի բռնադատութենէ
ծածկելոյ զվարանս՝ որովք տառապէրն:

Փեղորա ընդ մեկնել նորա խոնարհեալ
յունկն Սփրինճերի, ասէ. Լուր զհոգս՝ որ
նեղեն զիս. ո՛չ զգացեր զայլայլութիւն զբս-
տերն մերոյ, մտայոյզ կայ նա, շառագունի
'ի լուր անուան Սմոլոֆի, տրտմի 'ի չտե-
սանելն գնա. յառաւօտուս տատանեալ էին
միտք իւր յեկեղեցւոյ, աչք նորա շուրջ
յածէին, լսէի զի հարցանէր՝ թէ իցէ՞ Սմո-
լոֆ 'ի Սայիմքա. տեսի գնա գունատ մե-
ռելատիպ 'ի լուր մեկնելոյ պատանւոյն 'ի
Թոպուք: Յուշ լինին ինձ, իմս Սփրինճեր,
աւուրքն՝ յորս հանդերձեալ էի լինել քո
հարսն երջանիկ. հանգոյն իմն և ես շառա-
գունէի 'ի լսելն զքէն, նոյնպէս և ես աչս
ածէի շուրջանակի 'ի խնդիր քո, և 'ի չտե-
սանելն զքեզ՝ արտասուէի: Չնոյն նշանս
սիրոյ, որում՝ աւա՛ղ, զի չէ մարթ սունուլ
զկատարումն, չկարեմ առանց տրտմու-
թեան նկատել յոգւոյ գստերն մերոյ:
Պատասխանի ետ Սփրինճեր տրտմազին.
Յոյժ իսկ երջանիկ, երջանիկդ յանապատի
աստ, երջանիկդ յաքսորս: Փեղորա ասէ.
Այո, երջանիկ իսկ եմ և յանապատի աստ
և յաքսորս, երջանիկ և ամենայն ուրեք՝
ուր է սէր: Եւ զայս ասացեալ, գիրկս էարկ
նմա: Եւ անդրէն ուշ 'ի կուրծս անկեալ

Հոգոցն՝ որ նեղէին զնա, յաւել. Կասկածեմ զի դատրիկն մեր սիրէ զպատանին Սմոլոֆ. և թէպէտ գեղանի է օրիորդն, այլ գիտելով պատանւոյն՝ զի դուստր է նա աքսորականի հիբի, չհամարեսցի զնա իւր արժանի. և դատրիկն իմ միամօր, արիւն իմ, սնեալ իմովս կաթամբ, մահակից մօր իւրոյ լիցի ընդ սիրոյն: Ասէր և լայր. և ոչ այր իւր, որ սիրտովն նորա էր յամենայն ՚ի վիշտս, կարէր մխիթարել զնա ՚ի տառապանաց անտի: Մտայոյզ առ վայր մի կացեալ, և ապա ասէ. Մի երկնչիր, իմն Փեղորա. գիտէի և ես զԵլիսաբեթ, և յառաջագոյն իսկ քան զքեզ զգացի զյոյզս սրտի նորա. բայց այլ ինչ արդեօք խորհուրդ գրաւէ զմիտս նորա, և ոչ Սմոլոֆ. ոչ ինչ երկբայիմ, զի եթէ տալ զնա կամիցիմք պատանւոյն՝ ոչ անարժան զնա իւր համարեսցի ևս և յանապատի աստ. և այս նորա ազնուախոհութիւն արժանի կացուցանէ զնա դստեր մերում, եթէ երբէք... այլ չէ և չէ իսկ մարթ մնալ նմա ՚ի սպառ յանապատի աստ, ոչ մնասցէ նա անծանօթ, ոչ մնասցէ թշուառ, յանհնարից է այդ. այդքան առարկիւնութիւն յերկրի երևեալ աւետաւորէ զարդարութիւն երկնից, և վաղ կամ անագան հասցէ արդարութիւն:

Յորմէ հետէ կային յաքսորս անդ, չէր երբէք Սփրինճերի բարւոյ իմիք յուսացեալ. վասն որոյ ՚ի բարեգուշակ բանից նորա քաջալերեցաւ յոյժ Փեղորա. և հանգեան խաղաղութեամբ: Զամիսս երկուս յամենայն կիւրակէս գնայր Ելիսաբեթ ՚ի Սայիմքա՝ ակն ունելով գտանել անդ զպատանին, այլ ՚ի դուր. զի Սմոլոֆ ոչ ևս երելէր, և լուր իսկ եղև զի մեկնեալ էր նա ՚ի Թոպուքեայ: Յուսահատեալ այնուհետև եղ ՚ի մտի՝ զի պատանւոյն մոռացեալ էր զինքն ՚ի սպառ. և ՚ի խորհելն ՚ի նա՝ ստէալ հարկանէր ՚ի դառն արտասուս, որոց չէր երբէք տուեալ պատճառս ամբիծ անմեղութիւն նորա: Զուարթագոյն ՚ի վերջ կոյս ապրիլի ծագէր արեգակն ՚ի վերայ ձեանց, և կղզիք լծին աւազուտք սկսանէին առ փոքր մի ծածկիլ դալարեօք. պարզէր կանկար զկոկոն իւր ստուար ձիւնաթոյր, և ծաղկունք գունատք յօրինէին գորգ յանտառին: Թխատիալ սարեկաց ամալ իջանէր յանսաղարթ ոստս ծառոց, և նախերգակ զձմերայնոյ զուարթացուցանէր տխուր լռութիւն. աստ և անդ զգետեղերք թեւածէր ՚ի ճարակ բաղեան պարսիկ սեւակտուց՝ վարդագոյն փետրովք ցցունազարդ, որ ՚ի ճայթիւն հրազինուց ճչէ սաստկաձայն. ճախրէին կտցարք ազգի ազգի ՚ի շամբս լծին, կէսք սեւատեսակ և դեղնակտուց,

իսկ այլք բարձրաքեացք՝ մանեակ փետրազարդ յաքսն բերելով: Եւ զի՞ երկարեմ. զարուն կանխահաս գայր աւետաւոր ՚ի Սիպերիա, և տոյժ մեծ թուէր Ելիսաբեթի կորուսանել զայն ամ բարեսպասեհ յուղեռութիւն: Եդ ՚ի մտի քաջայանդուզն արիութեամբ կատարել զխորհուրդ իւր, յերկնից ակն ունելով օգնականութեան:

Ի միում աւուրց ընդ առաւօտն, յորժամ վաստակէրն Սփրինճեր ՚ի սլարտիզին, բաղմեալ անդ օրիորդն կայր լուիկ ՚ի զինն: Սփրինճերի չև էր յայտնեալ նմա ըզգաղտնիս թշուառութեան իւրոյ, և ոչ ևս դստերն հետազօտեալ զայն. զի ազնուագութ իմն գորով ծնողասէր արգելուն նմա չկամել գիտել զաղէտս ծնողաց իւրոց յառաջ քան զօր մեկնելոյ իւրոյ, չկամէր լսել որ ինչ նոցա կորուսեալն էր, չև կարող լեալ զնալ դարձուցանել ՚ի նոսա զամենայն: Մինչև ցայնժամ յուսացեալ էր ՚ի խոստումն պատանւոյն, և յայն հաստատեալ զելս իրացն խոհականութեամբ. այլ ՚ի դերև ելանել յուսոյն, դէպք անակընկալք հարկ առնէին նմա խօսել. բայց չև խօսեցեալ, խորհէր զամենայն դժուարութիւնս՝ զորս մարթէր ծնողացն ՚ի դէմս ածել, և զամենայն արգելս՝ զորս ընդդէմ իւր դնել. գիտէր իսկ զի ծանունք էին, զորս և պատանւոյն առարկեալ էր իւր, և գութ ծնողացն յաւելոյր և ևս ծանրացուցանել զայնս: Զինչ իսկ կարէր պատասխանել զարհուրելոյ նոցա և հրամանի և աղաչանաց. զինչ, եթէ զամենայն իսկ բերկրանս հայրենեաց չկամէին տարագնացութեամբ իւրով: Մինչդեռ ՚ի խորհուրդս յայսոսիկ յուղէին միտք իւր, մոռացեալ յանկարծ զի առ հօրն կայր՝ անկեալ ՚ի ծունր ողբովք, պաղատէր առ Տէր՝ տալ իւր բան ՚ի բերան ՚ի հաւան ածելոյ զծնօղս իւր: Դարձաւ հայրն ՚ի լուր ողբոց նորա, դիմեաց առ նա, և անկեալ զպարանոցաւ նորա՝ ասէ. Զի է քեզ դուստր իմ, զի՞ խնդրես, հիմ տառապիս, եկ ՚ի գիրկս հօր քո արտասուեա: Օրիորդն ասէ. Հայր իմ, մի արգելուր զիս, գիտես զի կամիմ երթալ, թող ինձ զի երթայց. սիրտ իմ վկայէ՝ զի կոչէ զիս Տէր: Եւ մինչդեռ բանքն ՚ի բերան նորա կային, եհաս աղջիկն սկիւթացի՝ ձայնելով. Ահա Սմոլոֆ, ահա Սմոլոֆ: Զայն ցնծութեան եբարձ Ելիսաբեթ, և զերկոսին ձեռս հօրն առ սրբտիւն կալեալ գրկապինդ, ասէ. Տեսանես հայր իմ, զի Տէր կոչէ զիս. նա առաքեաց զպատանին՝ բանալ առաջի իմ՝ ճանապարհ, ոչ ևս է ինձ խափան, խորտակեսցէ դուստրը քոյին զկապանս քո: Եւ ոչ մնացեալ

պատասխանուոյ, դիմեաց ընդ առաջ պատանուոյն. և հանդիպեալ մօր իւրում՝ գիրկս արկնմա և ասէ. Ե՛կ մայր իմ, աստ է Սմուլոֆ: Եւ մտեալ հանդերձ մարբն ՚ի հիւղանդր, գտանեն այր յիսնամեայ ՚ի գրատարբունի, չուրջ պատեալ ՚ի սպասաւորաց, և հիացեալ կան: Կրկնէ աղջիկն սկիւթացի. Ահա Սմուլոֆ քաղաքապետն Թոպուքեայ: Ելիսաբեթի ամենայն յոյս անդրէն կորուսեալ, գոյն երեսաց նորա հատաւ, աչք իւր լցան արտասուօք. և մօրն տեսանելով զայն, անց եկաց առաջի դստերն՝ ծածկել զաղմուկ սրտի նորա, և ցանկայր փոխանակել զկեանս իւր առ ՚ի զերծուցանել զնա ՚ի դառնաղէտ կրից անտի, յորմէ համարէր զնա ըմբռնեալ:

Քաղաքապետն Թոպուքեայ ՚ի բաց արար զսպասաւորս իւր, և մնացեալ առանձին ընդ աքսորեալս՝ դարձաւ ՚ի Սփրինճեր, և ասէ. Յորմէհետէ ուսական պետութեան հաճոյ թուեցաւ տարագրել զքեզ այսր, չեւ էր իմ եկեալ այց առնել ըզկողմամբքս. քաղցր է ինձ արդ զպարտս իմ զայս կատարել, որով կարեմս յայտ առնել զկարեկցութիւն իմ ընդ աղէտս մեծարոյ աքսորականիդ. այլ վիշտ է ինձ զի նոյն պարտք խափանեն զիս յօգնելոյ և ՚ի պաշտպանելոյ քեզ: Կարճեաց Սփրինճեր զբանս նորա, և ցրտաբար ասէ. Չիք իմ ակնկալութիւն օգնականութեան ՚ի մարդկանէ, չմնամ ՚ի նոցանէ գթութեան, չյուսամ իրաւանց յարդարութենէ նոցա. երջանիկ ՚ի թշուառութեան, որ հեռի ՚ի նոցանէ զիս կացուցանէ, կեցից անտրտունջ յանապատի աստ: Քաղաքապետն ՚ի գութ շարժեալ, ասէ. Չար է, ո՛հ բարեկամ, և կարի իսկ չար կեալ քեզ տարագիր ՚ի հայրենեաց: Սփրինճեր ասէ. Այլ չար ևս այն է՝ մեռանել հեռի ՚ի հայրենեաց... Եւ ոչ կատարեաց զբան իւր, զիւ և ոչ անթաց աչօք կարէր զայն կատարել, և ոչ ՚ի վայր քան զաղէտսն կամէր երևել վեհազնն չարաբաստիկ: Ելիսաբեթ յայնմ վայրի յետկոյս մօրն թագուցեալ, դիտէր երկիւղիւ ընդ ուս նորա զղէմս քաղաքապետին՝ թէ էր իւր վստահել ՚ի գութ նորին. որպէս երկչոտ աղաւնեակ յելս ՚ի բունոյ դիտէ ընդ սաղարթս՝ թէ խոստանայցեն օգք զտիւղուարթ: Դիտէր և քաղաքապետն զօրիորդն, ծանուցեալ զնա ըստ նկարագրելոյ յաճախ որդւոյ իւրոյ, զի նմա ևեթ զայր նկարագիրն այն ՚ի ճահ, և ասէ ցնա. Դստրիկ, ճանաչէ զքեզ որդի իմ, և յիշէ զքեզ անմոռաց: Եւ Փեղորայ ՚ի վերայ ածեալ ասէ. Պատմեաց նա քեզ, տէր իմ, զի դուստր մեր նմա գտանի շնորհապարտ

վասն կենաց հօր իւրոյ: Քաղաքապետն ասէ. Ոչ, տիկին. այլ ասաց՝ զի ինքն օրիորդն ցանկայ տալ զիւրն վասն ծնողաց իւրոց: Սփրինճեր ասէ. Այո, և տացէ իսկ. սէր նորա միայն մնայ մեզ բարի, զոր չկարեն յափշտակել ՚ի մէնջ մարդիկ: Յայնժամ քաղաքապետն փղձկեալ՝ դարձոյց զաչս իւր մեկուսի, և վայրիկ մի լուռ կացեալ, ասա ասէ ցօրիորդն. Դստրիկ, յառաջ քան զամիսս երկու պատուէր յինքնակալէն եհաս որդւոյ իմում ՚ի Սայիմբա, փութալ ՚ի բանակն՝ որ համախմբէր ՚ի Վիւնիա. հարկ եղև նմա կատարել անյապաղ զհրամանն. և ՚ի մեկնել իւրում եթող գիր առ իս՝ վասն քո, այլ չէր օրէն ՚ի ձեռն այլոյ յղել զայն առ քեզ. ինձ ևեթ մարթ էր մատուցանել քեզ զայն. առ ընկալ: Եւ էառ զայն օրիորդն պատկառանօք. և ՚ի վարմանալ ծնողաց նորա ընդ այն, ասէ քաղաքապետն. Երանի՛ ծնողաց, որոց դստեր չիք թաքուստինչ ՚ի նոցանէ՝ բաց ՚ի գաղտնեաց այսպիսեաց: Եւ կոչեցեալ ՚ի ներքս զսպասաւորս իւր, լու ՚ի լու նոցա ասէ ցհայր օրիորդին. Պատուէր ինքնակալին է չմուծանել զոք այսր. այլ լուայ զի արք ոմանք առաքելականք չբաւորք ՚ի դառնալ իւրեանց ՚ի ճենաստանէ՝ ընդ կողմանս ընդ այսոսիկ հանդերձեալ են անցանել, ՚ի գալ բաղխել նոցա զդուրս հիւղոյդ՝ հրաման է ձեզ ընդունել զնոսա:

Չայս ասացեալ մեկնեցաւ. իսկ օրիորդն զաչս ՚ի վայր արկեալ հայէր ՚ի գիր անդր, և չիշխէր բանալ զայն: Ասէ հայրն. Դուստրը իմ, եթէ հրամանի մնաս մօր քո և իմումս, տուեալ է քեզ, բաց զդա և ընթերցիր: Յայնժամ զողզոջնելով ձեռինն ելոյժ օրիորդն զկնիք գրոյն, և յընթեռնուրն զայն ՚ի մրմունջ արտասուք ցնծութեան և հառաչանք գոհութեան ընդհատէին ստէպ զընթերցուածն, մինչև ոչ ևս կարացեալ ժոյժ ունել՝ անկաւ ՚ի գիրկս ծնողացն, և ասէ. Ժամ է արդ բարեպատեհ ՚ի կատարումս խորհրդոյս, աստուածախնամ տեսչութիւն հորդէ ինձ ուղի աներկեան. օրհնեն երկինք զուղղութիւն մտաց և սրտի իմոյ. ո՛չ հաճեսջիք և դուք ընդ այն, ծընօղք իմ սիրելիք, ո՛չ օրհնեսջիք և դուք զայն:

Սփրինճեր ուրախութեամբ լսէր զբանս դստերն, ՚ի միտ առեալ զգօրութիւն նոցա. այլ Փեղորա անգէտ իրացն՝ ասէ. Չի՛նչ այդ խորհուրդ է քո, դուստր իմ, զի՛նչ է ՚ի գրիդ: Եւ ձեռն ձգեալ կամէր առնուլ զայն. այլ Ելիսաբեթ յետս ամիոփեալ զայն՝ ասէ. Ներեա ինձ մայր իմ, զողումն ունի զիս ՚ի խօսել իմում ընդ քեզ զայս:

մանէ . խիթամ՝ զի ընկճեսցիս 'ի ցաւոց
յանկասկածի . այդ միայն արգելու զիս ,
յայդմանէ ևեթ ընկրկիմ . Թոյլ արա ինձ
ընդ հօր իմում միայնոյ խօսել , զի ոչ իբրև
զնորայն պատրաստեալ է սիրտ քո 'ի լուր
բանիցս : Այլ հայրն ասէ . Մի , դուստր իմ ,
մի առներ զայդ , մեկնել զմեզ 'ի միմեանց ,
զոր աքսոր իսկ և աղէտք չկարացին . եկ
իմս Փեղորա , եկ մերձ առ իս . եթէ չիցէ 'ի
քեզ զօրութիւն հանդուրժելոյ 'ի լուր բա-
նիցն , մատուցից բովանդակ քեզ զիմս :
Իսկ Փեղորա տազնապեալ իբր 'ի սպառ-
նալեաց շանթից՝ որ յորմէ ձեռանէ ճայթե-
լոցն էր անգիտանայր , ասէ ահ ընդ ահ .
Ձինչ կամիցիս ասել , ո՛ր Ստանիսլաւ . ոչ
արիաբար ընդ քեզ կրեցի զարկածս ամե-
նայն : Եւ ողջագուրեալ զնա և զդուստրն ,
յաւել . Ոչ վերջացայց 'ի կրելոյ ընդ ձեզ
զամենայն ինչ յերեսաց հալածչաց : Պա-
տասխանել կամէր Ելիսաբեթ , այլ չեթող
նմա մայր իւր՝ ասելով կողկողազին . Խըն-
դրեա զկեանս իմ , այլ մի մեկնել քեզ յի-
նէն : Ի բանից աստի գիտաց դուստրն՝ զի
ոչ ևս պէտք էին յայտնելոյ ինչ մօրն , այլ
պարտ է հաւանեցուցանել ևեթ զնա . վասն
որոյ արտասուօք և գողութեամբ այսչափ
ինչ առ մայր իւր ասէր հեկեկելով . Մայր
իմ , յերջանկութիւն հօր իմոյ եթէ խնդրէի
'ի քէն զաւուրս քանի մի . . . Այլ մայրն տա-
ռապեալ արգել զբանս նորա , ասելով . Եւ
ոչ մի օր . ո՛հ , տէր իմ , մի թողուր զմա
խնդրել զայն յինէն : Այս բանք լքուցին
զԵլիսաբեթ , և ոչ ևս կարացեալ յառաջ
մատուցանել զբանսն վշտացուցիչս մօր իւ-
րոյ . ես հօր իւրում լռելեայն զգիր քա-
ղաքապետին՝ նշանացի ակնարկեալ ըն-
թեռնուլ զայն : Եւ նորա ողջագուրեալ
զՓեղորա , ասէ . Հանգիր դու անկասկած
'ի սիրտ իմ , զի նեցուկս այս ոչ երբէք քեզ
պակասեսցէ : Եւ ապա 'ի ձայն , զոր ընդ
վայր ջանայր ունել աննուաղելի , ըն-
թեքցաւ զգիրն՝ զոր պատանւոյն Սմոլոֆի
էր գրեալ 'ի Թոպուքեայ երկամետայ ա-
ւուրքք յառաջ , և պատճէն զրոյն էր այս .

« Մի 'ի ծանունց տրտմութեանց իմոց 'ի
մեկնել իմում 'ի Սայիմֆայ , օրիորդ ազ-
նիւ , այն իսկ էր՝ զի չկարացի ծանուցանել
քեզ զհարկն , որ ըստ իմոցս պարտուց
բռնադատէր զիս հեռանալ 'ի քէն : Զկա-
րէի , ոչ այց առնել քեզ , ոչ զրել առ քեզ ,
և ոչ հարցուածոց քոց առնել պատասխա-
նի՝ առանց անցանելոյ զպատուիրանաւ հօր
իմոյ , և արկանելոյ զնա 'ի վտանգ : Սակայն
թերևս արարեալ իսկ էր իմ զայն , եթէ ոչ
դու զհակառակն տայիր ինձ օրինակ . 'ի քէն
զորդիական պարտս ուսեալ՝ չկարէի ըզ-

կեանս հօր իմոյ վտանգել : Այլ խոստովա-
նիմ՝ զի չեն ինձ հաճոյ պարտք իմ այսո-
քիկ որպէս քոքդ քեզ . և եկի ես այսր 'ի
Թոպուք զայրացեալ : Հայր իմ տայ ինձ
պատուէր յինքնակալէն՝ զնալ ինձ հեռի
աստի հազար փարսախ . այլ ոչ գիտես
որ ինչ կրեմս 'ի սրտի , և մի իսկ ա-
րացեն երկինք զիտել քեզ զայն . այլ ար-
դարադատ են երկինք , և ոչ թողցին զքեզ
չարաբաստիկ : Բացի հօր իմում զսիրտ իմ ,
ծանուցի նմա զքեզ , և ելաց 'ի լուր առաջ-
արկութեան քո . Թուի ինձ զի կամիցի տե-
սանել զքեզ , և յայս իսկ գալոց է յայսմ
ամի այց առնել շուրջ զԽսթիմաւ , և գտա-
նել զհնարս հասուցանելոյ առ քեզ զայս
գիր : Խաղաղագոյն սրտիւ մեկնիմ , Ելիսա-
բեթ , թողեալ զքեզ ընդ պաշտպանու-
թեամբ հօր իմոյ . այլ աղաչեմ զքեզ , մի
քան զդարձ իմ կանխել զուղեւորութիւն
քո 'ի ձեռն նորա . յուսամ յառաջ քան
զամ մի դառնալ 'ի Թոպուք , և ինքնին ածել
զքեզ 'ի Պետրոպօլիս . ես յանդիման ա-
րարից քեզ ինքնակալին , ես խնամեցից
զքեզ 'ի բազում երկայն ուղեւորութեանդ :
Մի երկնչիր , ոչ ևս խօսեցայց ընդ քեզ զսի-
րոյ , բարեկամ ևեթ եղէց քեզ , եղբայր
քո եղէց . ծառայեցից քեզ ամենայն եռան-
դեամբ սիրոյ , այլ երդնում չխօսել՝ բայց
'ի բարբառ անմեղութեան , 'ի լեզու հրեշ-
տակաց , 'ի լեզու քոյին » :

Եւ 'ի ստորոտ գրոյն քաղաքապետն
ինքնին յաւելոյր այսպէս . « Մի , օրիորդ ,
մի լիցի քեզ ընդ որդւոյ իմում ուղեւորել .
իբր ոչ եթէ կասկածեմ երբէք զհամես-
տութենէ նորա , այլ զի քոյդ լիցի զերծ
յամենայն կասկածանաց : Ի գնալ քում
ցուցանել տրքունեաց Թուսաստանի ա-
ռաքինութիւնս արժանավայելուչս պսակի ,
մի լիցի տեղի տալ բանից՝ թէ 'ի տարփա-
ւորէ քումմէ առաջնորդիս , և ստուերածս
ածել քումդ որդիական գորովոյ՝ քան զոր
չիք ումեք սէր գեղեցկագոյն յանձին բե-
րել : Ի քում յայդմ պայմանի՝ չիք ոք ան-
մեղութեանդ քո պաշտպան արժանաւոր ,
բայց Աստուած և հայր քո . հայր քո չկարէ
գալ ընդ քեզ , այլ Աստուած ոչ թողցէ
զքեզ 'ի ձեռանէ : Կրօնք մատուցեն քեզ
ջահ և նեցուկ , 'ի կրօնս լեր ապաստան .
զիտես իսկ քաջ ում թողի մտանել 'ի
խրճիթ քո : Ի տալ իմում քեզ զգիրս զայս ,
աւանդապահ զքեզ բախտին իմոյ կացու-
ցանեմ . զի եթէ սա 'ի յայտ գայցէ , եթէ
'ի կարծ իսկ ծանիցի՝ զի օգնեմ ելից քոց
այսի , կորուստ անդարձ հասանէ ինձ . այլ
անկասկած եմ զայսմանէ , գիտեմ յո՛վ վըս-
տահիմս , և իմ իմիք իցէ ինձ մնալ 'ի զօ-

բութենէ և յառաքինութենէ դատեր՝ որ
զնէ զանձն 'ի վերայ հօր իւրոյ » :

Յընթեռնուլ Սփրինճերի զգիրս զայս՝
զօրանայր տակաւ ձայն նորա, և խրախու-
սէր սիրտ նորա յերեսաց գերապանծ ա-
ռաքինութեանց դատերն, և մեծարանաց
ընծայելոյ նմա: Այլ մայր նորա ոչ այլ ինչ
զմտաւ ածէր, բայց զմեկնել դատեր իւրոյ.
գունատեալ, լքեալ, յառեալ անթիթ 'ի
դուստր իւր, և մերթ զաչս յերկինս 'ի վեր
ամբարձեալ, չկարէր իսկ լալ: Իսկ դուստրն
ծունր առաջի նոցա եղեալ, ասէ. Թոյլ
տուք ինձ, ծնողք իմ, յայս ձե ցուցակի
ընդ ձեզ բարբառել. զի զվերագոյնն ամե-
նայն բարեբախտութեանց՝ խոնարհու-
թեամբ արժան է հայցել: Իշխեմ՝ ակն ու-
նել դարձուցանելոյ 'ի ձեզ զազատութիւն
ձեր, զերջանկութիւն և զհայրենիս. յամաց
հետէ այս է՝ յոր բերի յոյս իմ քան զամե-
նայն ինչ ինձ ցանկալի. զոր արդ ուրեմն
մերձ հասեալ տեսանեմ. և ոչ Թողուցուք
ըմբռնել ինձ զայն: Ո՛հ, եթէ առաւել քան
զոր խնդրեմս 'ի ձէնջ կայցէ ինչ ցանկալի,
մի լսէք ինձ, հաճոյ է և ինձ. այլ թէ չկայ-
ցէ...: Այլ յասելն զայս 'ի փղձուկ և զգո-
ղանի հարեալ, հեղձամղձուկ եղև ձայն նո-
րա, և փարեալ զծնդովք ծնողացն՝ հաղիւ
զբանս իւր կարաց կատարել: Հայր նորա
ձեռս 'ի գլուխ դատերն եղեալ՝ կայր ան-
բարբառ. իսկ մայրն գոչէր. Միայնակ, հե-
ռի, անօգնական. մի և մի լիցի, չկարեմ
Թողուլ: Յաւել դուստրն կողկողազին. Յիս
մայր իմ, մի մերժեր զխնդրուած իմ. յան-
կարձ գիտէիր յորմէ հետէ երկնեմ 'ի սրտի
զխորհուրդս զայս, և քանի սփոփանս ան-
տի ընկալեալ է իմ. ընդ ներել տիոց ինձ
հասու լինել աղետից ձերոց՝ եզի 'ի մտի
նուիրել զկեանս իմ առ 'ի հանել զձեզ յա-
զատութիւն. երանի՜ աւուրն՝ յորում խոս-
տացայ օգնել հօր իմում. երանի՜ յուսոյն՝
որ զիսն քաջալերէր 'ի տեսիլ արտասուաց
նորա: Ո՛հ, քանիցս անմուռնչ տառապա-
նացդ ձերոց ականատես՝ ընկճեալ լինէի 'ի
մահառիթ տրտմութենէ, եթէ չէր իմ կա-
րացեալ ասել ցիս. Ես ինքն դարձուցից 'ի
նոսա զկորուսեալն նսեհ, ընդ որ մորմո-
քին: Հայր իմ, մայր իմ, եթէ բառնայք յի-
նէն զայս յոյս՝ բառնայք զկեանս իմ. 'ի խա-
փանել իմում՝ յառաջարկութենէ աստի՜
յոր ամենայն խորհուրդք իմ յանգին, ոչ
ևս պիտանի Թուեսցին ինձ կեանք իմ, ա-
ւուրք իմ շիջին նուազեալ: Ներեցէք ինձ,
եթէ վշտացուցանեն զձեզ բանք իմ. կեցից
արդեօք յարգելուլ ձեր զիս աստ, կեցից,
ոչ մեռայց, և ոչ մահ իմ յաւելցէ ձեզ
վիշտ. այլ Թողէք ինձ լինել երջանիկ: Մի

համարիք անհնարին զխորհուրդ իմ, չէ և
չէ իսկ անհնարին. սիրտ իմ վկայէ զայս.
զօրեսցէ սա խնդրել զիրաւունս, ոչ պա-
կասեսցեն սմա բանք ընդունելոյ ձեզ զայն.
ոչ զանգիտէ սա յիմեքէ, ոչ 'ի վաստակոց,
ոչ 'ի խափանաց, ոչ 'ի նախատանաց, ոչ
յարքունեաց, և ոչ յարքայից. այլ զան-
գիտէ և եթ 'ի չկամելոյ ձերմէ: Աստանօր
կարճեալ Սփրինճերի զբանս նորա, ասէ.
Թող, դուստր իմ, Թող, խռովես զոգի իմ,
այլայլիմ. չէր իմ ցարդ ընկըրկեալ յառա-
քինական ինչ գործոյ, և ոչ քաջութեան
իմոյ սասանեալ յերեսաց առաքինութեան.
չկարծէի, դուստր իմ, գոլ տկար. այլ 'ի
քէն ուսանիմ զի եմ. մի լիցի, չկարեմ հա-
ւանել ընդ խորհուրդ քո: Եւ Փեղորայ 'ի
չհաւանելոյ առնն խրախոյս առեալ, կա-
լեալ զձեռանէ դատերն, ասէ. Լուր ինձ,
դուստր. եթէ տկար է հայր քո, Թող զի
և մայր քո լիցի տկար. ներեա նմա թէ
չկարէ Թողուլ քեզ կատարել զայդ ա-
ռաքինութիւն: Դէպք նորանչան, խնդրել
մօր 'ի դատերէ՝ զի նուազ առաքինութիւն
յանձին բերիցէ. այլ մայր քո խնդրէ և եթ
զայն 'ի քէն, և ոչ հրամայէ քեզ. գեր 'ի
վերոյ ամենեցուն կալով քո, ոչ ումեք օ-
րէն է հրամայել քեզ բաց 'ի քէն: Ելիսա-
բեթ ասէ. Այլ հրաման քո լիցի ինձ միշտ
պաշտելի. եթէ կամիս կալ ինձ աստ, յու-
սամ զօրել հնազանդել քեզ. այլ զի գորո-
վի սիրտ քո ընդ խորհուրդ իմ, յուսամ զի
և հաւանեսցիս ընդ այն: Չէ և չէ այն հա-
րեանցի ինչ եռանդեան բերումն, այլ ընդ-
երկար երկանց մտաց ծնունդ. ոչ 'ի գութ
և եթ որդիական գորովոյ, այլ և 'ի պատ-
ճառս հաստատունս յեցեալ: Կայցէ՛ ինչ
այլ հնար զերծուցանելոյ զհայր իմ յաքսո-
րանաց. յերկոտասան ամս, յորմէ հետէ
տառապի նա աստ, ո՛րի բարեկամաց յանձն
էառ բարեխօսել վասն նորա. եթէ առնոյր
իսկ ոք յանձն, իշխէր երբէք խօսել իրրե
զիս, ազդէր 'ի նա սէր հանգոյն իմոյս: Ո՛հ,
Թողէք ինձ հաւատալ, որպէս և հաւատամս
զի դատեր ձերում պահեալ է Աստուած
դարձուցանել 'ի ձեզ զբարեկենդանու-
թիւն. և մի խափանէք զփառաւորեալն
պաշտօն՝ զոր հաճեցան երկինք հաւատալ
'ի նա:

Չինչ աղէ գտանէք յառաջարկութեանս
իմում չար. զմեկնել իմ 'ի ձէնջ. այլ ոչ
լսէի ես յաճախ հառաչելոյ ձեր զաքսորա-
նացդ, զի խափանէ զիս 'ի լինելոյ առն. և
ոչ այրն այն մեկնեսցէ զիս 'ի ձէնջ 'ի բաց:
Չվտանգս ուղեորութեան. այլ ո՛ր այն վը-
տանդ իցէ. ձմեռն երկրին սովորեցոյց զիս
խստութեան ցրտոյ, և արշաւանք ընդ ա-

ռապարս՝ ուսուցին ինձ զվաստակս երկայն ուղևորութեան: Զտիոց իմոց կասկածէք, այլ այն իսկ լիցի ինձ պատասպարան, զի տրկարի ամենայն ոք հասանէ յօգնականութիւն: Իսկ զանփորձութենէ՝ իմիկ երկընչիք, այլ չեղէց միայնակ. յուշ լիցին ձեզ բանք և զիր քաղաքապետին. ոչ առ այլ ինչ ներէ նա առաքելական չքաւորաց ընդ յարկաւս մերով հանգչել, բայց առ ՚ի տալ ինձ ուղեկից սլաշտական և առաջնորդ: Տեսէք արդ՝ զի ամենայն ինչ հոգացեալ է, չիք ինչ վտանգ, չիք ինչ խափան, չիք ինչ պակաս, բայց հրաման ձեր և օրհնութիւն: Յայնժամ յաւել Սփրինճեր դառնազին. իսկ կերակո՛ւր. մուրանայցես դու զայն, նախահարց մօր քո՝ որք ՚ի կողմանս յայսոսիկ թագաւորեցին, և իմոցս՝ որք կացին յաթոռ Պոլոնիոյ, արժան իցէ տեսանել զթոռնեայ իւրեանց մուրացիկ ընդ Ռուսաստան, որ ընդ մարզս ինքնակալութեան իւրոյ զթագաւորութիւնս նոցա կացոյց: Որովմ՝ համեստօրէն զարմացմամբ պատասխանի արար օրիորդն. Եթէ արիւն այգալիսի գնայ ընդ երակունս իմ, եթէ իցեմ արքայազն, և պսակք կրկին ՚ի ճակատս նախահարց իմոց եթէ կացին, յուսամ երևել արժանի նորա և ձեզ, և մի երբէք անպատիւ առնել զանունն՝ զոր թողին նոքա ինձ. այլ աղքատութիւն չածէ բնաւ անարգանս: Զինչ ամօթ իցէ դստեր Սէիտեանց և Ռոպեքեանց խնդրել ողորմութիւն յիւրոց նմանեաց. քանի՜ սուազորեար, անկեալ ՚ի բարձուէ փառաց, ոչ խնդրեցին ողորմութիւն. բարեբաղդագոյն քան զնոսա գտանիմ ես, յօգնութիւն հօր իմոյ խնդրելով զայն:

Աքիական հաստատութիւն օրիորդին և գերաշխարհիկ վեհանձնութիւն, որ ցոլացուցանէր յաչս նորա զխորհուրդ խոնարհելոյ ՚ի սէր ծնողացն, յաւելուին ՚ի բանս նորա զօրութիւն իմն և սաստ այնպիսի՝ որ յաղթանակեցին ՚ի վերայ Սփրինճերի: Ոչ ևս զգայր նա յանձին իրաւունս խափանելոյ զդուստր իւր յայնպիսի առաքինութենէ. խղճէր բռնադբօսել զնա ՚ի ծածկել զայնքան առաքինութիւն յանապատիւ անդ. կալաւ զձեռանէ հարսինն, և ասէ ՚ի ձայն մեծ. Ո՛վ իմա Փեդորա, թողցո՛ւք դմա զրաւել աստ զկեանս. զրկեսցո՛ւք զդա ՚ի բարեաց տալոյ ՚ի լոյս որդիս հանգոյնս իւր. զօրացիր սիրեցեալդ իմ. և քանզի չիք այլ հնար ցուցանելոյ զդա աշխարհի՝ որում լիցի դա ՚ի պարծանս, թողցուք դմա մեկնել: Ընդ այնպիսի բանս առն իւրոյ այլայլեալ մայր օրիորդին, զայն առաջին նուագ յամենայն կեանս իւր ընդ-

դէմ եկաց իշխանութեան՝ որ սրբազան էր նմա, և ասէ. Քաւ լիցի, ոչ թողից զդա, ՚ի զուր խնդրէ զայն այր իմ. հակառակ կացից նմա. և զինչ, վտանգել զկեանս զըստեր, թողո՛ւ մեկնել իմոյս Ելիսաբեթի, և լսել ապա զկորուստ նորա ՚ի ցրտոյ և ՚ի կարօտութենէ յահագին անապատս. կեալ առանց նորա վասն ողբալոյ զնա յարածամ. տես ինձ որ ինչ սլահանջի ՚ի մօրէ: Ո՛չ ՚ի միտ առնուս, ո Ստանիսլաւ, զի ՚ի վեր է այդ քան զկար իմ, և ցաւ այնպիսի դառնակսկիծ՝ զի ոչ ևս կարասցես սփոփել զիս: Եւ ՚ի խօսելն զայսոսիկ՝ ցնորեալ իմն թուէր, ոչ ևս իսկ արտասուէր. ընդ որ աղէկիղեալ Սփրինճերի առ վշտին, ասէ ցօրիորդն. Դուստր իմ, մինչև մայր քո չըտայ հրաման՝ ոչ մեկնեսցիս: Ասէ դուստրն ցմայր իւր. Մայր իմ եթէ այսպէս հրամայես՝ ոչ մեկնեցայց: Եւ գորովագին գգուանօք յաւել. Յամենայնի եղէց քեզ հնազանդ. այլ թերևս հաւանեցուցէ զքեզ Տէր, յոր ինչ չկարաց հայր իմ հաւանեցուցանել. եկ աղօթեցուք ՚ի միասին, խնդրեսցուք ՚ի Տեառնէ ցուցանել որ ինչ պարտ իցէ մեզ առնել. նա է լոյս՝ որ առաջնորդէ մեզ, նա ինքն է զօրութիւն՝ որ օգնական լինի մեզ. ՚ի նմանէ է ամենայն ճշմարտութիւն, ինքն տայ մեզ ապաստանել ՚ի կամս իւր: Եւ արտասուօք եկաց յաղօթս Փեդորա. բարեպաշտութիւն՝ որ խաղաղէ ողորդէ և տիրէ սրտի, փոխանակեալ ընդ վշտաց՝ որ կեղեքեն զնա, բարեպաշտութիւն սուրբ՝ որ ոչ հրամայէ ինչ առանց ցուցանելոյ զվարձ, բարբառ աստուածային ազդոյ ՚ի սիրտ բարեգութ, շարժեաց զհոգի Փեդորայ: Ի վէս և ՚ի խրոխտ սրտից, որք ՚ի փառս հաստատեն զիւրեանց բարեբաստութիւն, մեծարանք և եթ մարդկան կարող են ընդունել զիրաց զկարի իսկ նոցին սիրելեաց նուիրումն. կրօնք միայն ընդունին զայն ՚ի սրտից, զորոց սէր և եթ յարդարէ զբարեբախտութիւն:

Ի վաղիւ անդր Սփրինճեր գտեալ միայնակ ընդ դստերն, պատմեաց նմա զերկարատե թշուառութիւն իւր. եցոյց նմա յորպիսի աղիողորմ պատերազմունս պառակտեալ Պոլոնիա, և որպէս թագաւորութիւնն այն թշուառ ջնջեալ էր ՚ի գասակարգէ պետութեանց, և յաւել. Իմ միակ եղեռն, դուստր իմ, էր հայրենասիրութիւն՝ որ չհանդուրժէր ընդ անկումն աշխարհիս ՚ի ծառայութիւն. երևելագոյնք ՚ի թագաւորաց նորա կացեալ էին ինձ արեւակիցք. ինձ իսկ մարթ էր ելանել ՚ի դահ. պարտական էի զսէր և զկեանս իմ տալ աշխարհին՝ յորմէ էին ամենայն փառք իմ:

Մատուցի նմա զծառայութիւն իմ, որպէս պարտն էր ինձ. միայնակ 'ի գլուխ գնդի միոյ փոքու տղատորդւոց համագգեաց՝ պաշտպանեցի նմա մինչև 'ի սպառ ընդդէմ երկոց հզօր պետութեանց, որ գային տիրել նմա. և յորժամ ընկճեալ յառաւելութենէ թշնամեաց առ պարսպօր Վարսաւիոյ, 'ի տեսիլ մայրաքաղաքին մեծի մատնելոյ 'ի հուր և յաւար՝ հարկ եղև զպարտութիւն յանձն առնուլ և մտանել ընդ լծով բռնաւորութեան, տակաւին 'ի սրտէ գդէմ ունէի: Կորակոր խոնարհեալ, զի կայի յաշխարհին իմում՝ որ ոչ ևս էր իմ: Խնդրէի զէնս ամենայն ուրեք, ամենայն ուրեք նիզակակիցս՝ առ 'ի դարձուցանել 'ի նա զպաշտութիւն իւր և զանուն: Այլ ընդունայն ճիգն, զուր վաստակ. օրըստօրէ պնդէին չղթայք, և ձեռք իմ տկարք չկարէին զայնոսիկ խորտակել: Անդաստանք հարցն իմոց էին 'ի բաժնի աշխարհին, որ նուաճեալ էր ընդ ձեռամբ Ռուսաց. անդ կէի ընդ Փեղորայ բարեբաստիկ, եթէ լուծ օտար չծանրանայր զինև: Բողոք՝ զոր չկարէի հեղձուցանել յիս, և մանաւանդ խրոնել տժգոհ որերոյ առ իս, տազնապեցուցին զինքնակալն կասկածոտ. և 'ի միում աւուրց ընդ առաւօտն յափշտակեալ 'ի տանէ և 'ի գրկաց մօր քո և 'ի քէն, դատրիկ իմ, մինչ դեռ ևս էիր քառամեայ, և ոչ արտասուէիր՝ բայց 'ի տեսիլ արտասուաց մօր քո, ածայ 'ի բանտ 'ի Պետրոպօլիս: Զհետ իմ եկն Փեղորայ, զմիայն շնորհ կարացեալ ընդունել լինելոյ ընդ իս բանտարգել. աւելի քան զամ մի եղաք 'ի սոսկալի բանտին, զրկեալ յօդոց, գրեթէ և 'ի լուսոյ, այլ ոչ 'ի յուսոյ: Զկարէի հաւատալ՝ զի ինքնակալ արդար չարսացէ անպարտ զառն քաղաքացւոյ պաշտպանել իրաւանց աշխարհին իւրոյ, և չվստահասցի 'ի խոստումն՝ զոր տայի կալոյ նմա հպատակ: Կարի յոյժ բարիս խորհէի զմարդկանէ. դատապարտեցայ առանց լսելի լինելոյ, և սրսորեցայ ցկեանս 'ի Սիպերիա: Նժգեհակից իմ հաւատարիմ չեթող զիս. և պարտիմ յաւելուլ, զի գութք նորա քան թէ պարտք ածէին զնա ընդ իս. զի աքսորեալ իսկ եթէ էի 'ի սառնապատ մօայլ զարհուրելոյն Պերեգովայ, և յամայի միայնութիւն լճին Պայքալայ կամ Քամչեաքայ, անդր ևս գայր նա զհետ իմ. չգոյր ուրեք անապատ, չգոյր անձաւ վայրենի՝ ուր չգայր ընդ իս իմա Փեղորայ: Այո ամենեւին. ոչ ինչ երկբայիմ, զի վասն առաքինութեան նորա և աղնուական նուիրման անձին 'ի սէր իմ, մեղմագոյն տուաւ ինձ աքսոր: Եթէ քաղցրացան ինձ երբէք կեանք իմ, դատրիկ

սիրելի, մօր քում զայնմանէ գտանիմ շնորհապարտ. իսկ որ ինչ դառնութիւն եղև ինձ կրել, ևս ինքն ամենայնի գտանիմ պարտաւոր: Յայնժամ Նիսաբեթ ասէ. Այլ միշտ, հայր իմ, սիրեցեր դու զնա: Եւ 'ի բանից աստի ծանեալ հայր նորա զսիրտ հարսինն 'ի դստեր իւրում, և գիտաց զի կարէր և նա չլինել թշուառ ընդ առն տառապելոյ: Եւ տուեալ նմա զգիր պատանւոյն Սմոլոֆի, զոր ունէին առ իւր յերկէ, ասէ. Դուստր իմ, եթէ յաւուր միում լիցի ինձ գոլ արիութեան քում շնորհապարտ, բարեաց՝ որոց վասն քո և եթ ցանկամ 'ի վայելս անդ բարեբաստութեան՝ զիրս այս յիշեցուցէ մեզ զբարերար մեր: Պարտի Նիսաբեթ գոհացող լինել. խնամութիւն առաքինութեան փառաւորէ զազգ թագաւորաց, Շիկնեցաւ օրիորդն, և ընկալեալ 'ի ձեռանէ հօր իւրոյ զգիրն՝ մերձեցոյց 'ի սիրտ իւր, ասելով. Յիշատակ այնորիկ՝ որ ելացն ընդ քեզ, որ սիրեացն զքեզ, որ ծառայեացն քեզ, մի երբէք անկցի 'ի սրտէ աստի:

Կը շարունակուշի.

ՀՈՌՎՄԷՍԿՍՆ ԳԵՐԻՓ

Ինչպէս յունական ամեն հին ժողովուրդներ, նոյնպէս և Հռովմայեցիք ունէին իրենց գերիները, գերեալք՝ ի պատերազմի: Բայց ոչ թէ միայն պատերազմն էր պատճառ գերութեան, այլ նոյնպիսի պատժով կը պատժէր Հռովմէական օրէնքն և զդասալիքս, զմատնիչս և զապօտամբս:

Իսկ գերեաց նկատմամբ զրուած օրէնքներն ասոնք էին.

« Գերին ոչ թէ անձն, այլ իր մ'է:

« Գերին չի կրնար ստանալ, վասն զի ինքն է ստացուած այլոց:

« Ամեն քաղաքական պաշտամանց մէջ, գերին իբրև ոչինչ է համարուած:

« Իր վկայութիւնն դատաստանաց մէջ ամենեւին չի զօրեւր, և ոչ զոք կըրնայ 'ի դատ կոչել:

« Գերին չի կրնար կտակադրել. այլ իր տէրն է իրեն օրինաւոր ժառանգը:

Հռովմայ մէջ թոյլ տրուած էր գերեաց ամեն տեսակ արուեստ ընել.